ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), № 15, Արցախ», *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, 192 էջ։*

Պատմական Արցախի ազգագրության և բանահյուսության հավաքումը, հրատարակումն ու ուսումնասիրումը հարուստ պատմություն ունի։ Անցյալ դարի 80-ական թվականներին Արցախում ազգային մտավոր կյանքը վերելք էր ապրում, և Շուշին դառնում է համահայկական էթնոմշակութային խոշոր կենտրոն։ Շրջանի բանահյուսական արժեքների հավաքմանն ու հրատարակմանը զուգահեռ Շուշիում լույս են տեսնում Մանուկ Աբեղյանի՝ Էջմիածնում գրառած մեր ազգային հերոսավեպի երկրորդ պատումը և հայ առաջին ժողովրդագիտական ամսագրի՝ «Ազգագրական հանդես»-ի հիմնադիր առաջին գիրքը։ Պատմական Արցախի բառ ու բանի մերօրյա հավաքման և ուսումնասիրման նվաճումները նշանավորվում են հայ ժողովրդական հեքիաթների 5-րդ, 6-րդ, 7-րդ հատորների և բանահյուսական մեկից ավելի, այդ թվում քննության առարկա սույն և նրան նախորդած ժողովածուների հրապարակ գալով։

«Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 15-րդ հերթական համարը կազմված է Ալվարդ և Բարխուդար Ղազիյանների վերջին տասը տարում հավաքած մեծահարուստ նյութերի ընտրանուց։ Դրանք ներկայացնում են պատմական Արցախի 25 խոշոր բնակավայրեր, որոնք մտնում են Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Ադրբեջանական ՍՍՀ-ի Շահումյանի շրջանի վարչատարածքային բաժանման մեջ։ Ժողովածուն ունի գիտական հարուստ ապարատ, որը կազմել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Ալվարդ Ղազիյանը։ Սեղմ «Ներածության» մեջ նա ներկայացնում է Արցախի բանահյուսության գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը, արժեքավորելով անցյալի և մեր օրերի բանահավաքների աշխատանքը։ Ժողովածուն ունի ծանոթագրությունների բաժին, ուր մեկ առ մեկ ներկայացված են ամեն մի նյութի գրառման, տեղի, ժամանակի, ասացողի կյանքի և աշխատանքի կարևոր հանգամանքների մասին տեղեկություններ. տրված են նաև աչքի ընկնող բանասացների լուսանկարները։ Վերջում զետեղված է բառարան, որտեղ բացատրված են բարբառային նվազ հասկանալի և այլ լեզուներից փոխառյալ բառերի բացատրությունները։ Ալվարդ և Բարխուդար Ղազիյանների հավաքած բանահյուսական նյութերը նախորդների համեմատությամբ բնութագրվում են գրանցման նոր եղանակով (մագնիտոֆոնային գրանցումներ), որը պայմանավորվում է յուրաքանչյուր ասացողի ոճի անկրկնելիությամբ, Ղարաբաղի և Հադրութի բարբառների արխաիկ դարձվածքների (ինչպես օրինակ, այ էր, այ ասված, ընդէտանս. դրանից հետո, ասաս. հետո, ասա էլ. այնուհետև) և խոսվածքների պահպանմամբ։ Այս արտահայտությունները այսօր իբրև միջարկություն են գործածվում։

Ժողովածուն պարունակում է հրաշապատում, արկածապատում և իրապատում սյուժեններով 40 հեքիաթ, 73 առակ, զրույց ու զվարճախոսություն, 41 ավանդություն, 9 երգ ու խաղերգ, գյուղերի և մարդկանց 24 մականուն, շուրջ 500 առած-ասացվածք, 200 անեծք, օրհնանք, երդում, սպառնալիք և այլ նյութեր։ Արցախի բանահյուսությանն ընդհանրապես, իսկ ներկա ժողովածուին մասնավորապես բնորոշը արձակ-պատմողական բնագավառն է։ Դրանց շարքում հատկապես ուշագրավ է մեր ազգային հերոսավեպի մի պատումը՝ «Սանասարն նան Բաղդասարը», որը գրի է առնվել 1974 թ. Ստեփանակերտ քաղաքում, ատաղձագործ, 78-ամյա Արտաշես Կասպարյանից։ Այս պատումը ժանրային կերպարանքը փոխած ու հեքիաթի կաղապարի մեջ մտած ստեղծագործություն է, որը, սակայն, կարևոր է հերոսավեպի տարածման ու կենցաղավարման շրջանակների հետազոտման տեսանկյունից։

Ժողովածուի հեքիաթների բաժինը հարուստ է արցախյան հիմնական տիպերի բազմազանությամբ։ Դրանց մի զգալի մասը Բահաթրյանների հրատարակածների նոր տարբերակներն են, մի մասն էլ ներկայացվում են առաջին անգամ («Հավատարիմ կնեգյը», «Առյուծն առյուծ ա, օղում ա էք ինի, օղում ա՝ վերց» և այլն)։ Հրաշապատում հեքիաթները, ինչպես նկատելի է ժողովածուում բերված օրինակներում, օտար ազդեցությունների և բուն կյանքում տեղի ունե-

գող տեղաշարժերի հետևանքով ներքին կառուցվածքային և արտաքին արտահայտչամիջոցների փոփոխություն են կրել, իսկ իրապատում-արկածայինները աչքի են ընկնում սյուժետային ամբողջականությամբ ու ավարտվածությամբ, երկխոսություններով՝ հագեցված վիպական մանրամասների առատությամբ։ Զգալի թիվ են կազմում պարսկական դաժան միապետ Շահ Աբասի անվան հետ առնչվող հեքիաթների նմուշները։ Դրանց մի մասը վիպական ավանդությամբ են կապվել Շահ Աբասի անվան հետ, իսկ որոշ սյուժեներ պատմական արմատներ ունեն։ Արժեքավոր են նաև ներկայացվող ավանդությունները, որոնք պահպանել են հիշողություններ պատմաազգագրական շրջանում կատարված ոճցուղարձերի, բնիկ ժողովրդի հավատալիքների ու սովորությունների մասին։

Արցախը հայտնի է եղել իր աշուղներով, որոնց, ինչպես այլ ազգագրական շրջաններում ևս, վերադրվել է արտակարգ խելք, խոյաթափանցություն, գուշակելու ունակություն։ Աշուղներ Սարգիսը և Առուստամը շրջանի աշուղական դպրոցի վերջին ներկայացուցիչներն են, իրենց բանաստեղծական շնորհքը, ըստ ավանդությունների, ստացել են սրբավայրերից, մշտապես հաղթանակով են դուրս եկել վեճ-մրցույթներից։ Այս դրվագներն էլ նյութ են տվել նրանց անվան շուրջը հյուսված ավանդական զրույցներին։

Սիսական բանահյուսությունից, որն, ի դեպ, մեր օրերում գնալով սակավադեպ է դրանցվում, ժողովածուում ներկայացված է անձրև առաջացնելու և տեղատարափը կանխելու ծիսական երգերը։

Արցախում ընդհանուր մի երևույթ է հարևան գյուղերի և նույն գյուղերի տարբեր տոհմերի իրար ծաղրելը, որն արվում է ինչպես փոքրածավալ սյուժեների, այնպես էլ մականունների միջոցով։ Մականունները, որ կոչվում են «փութ» անուններ, ժողովածուում տպագրվում են առաջին անգամ։ Արցախում մեր օրերում լայն տարածում և համընդհանուր գործածություն ունի գարձվածաբանական բանահյուսությունը։ Ուշադրության արժանի է այն, որ ժողովուրդը մինչև հիմա էլ պահպանում է հավատը խոսքի ներգործուն ուժի՝ անեծքի, օրհնանքի, երդման նկատմամբ և լայնորեն օգտագործում։

Հարուստ է ժողովածուի զվարճապատումների բաժինը. դրանք շրջանում տարածված Պըլը Պուղու, Մոլլա Նասրեդինի շուրջը հորինված ավանդական սյուժեների նոր տարբերակներն են կամ էլ նոր անունների շուրջ հորինված նոր պատումները։ Շրջանում յուրաքանչյուր շեն ու ավան ունի իր զվարճախոսը, որի անվան շուրջը խմբավորվում են զավեշտական զանազան դեպքերն ու իրողությունները, ինչպես օրինակ՝ Տիգրանի, Բուդու շուրջ հյուսված սյուժեները Աշան ու Ղզղալա գյուղերում։

Ժողովածուում տեղ գտած բոլոր նյութերն էլ տպագրվում են առաջին անգամ և պատկերացում են տալիս շրջանում գոյություն ունեցող բանահյուսության մերօրյա վիճակի մասին։ «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի այս հատորը նույն մատենաշարով 1981 թ. հրատարակված անվանի ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» ազգագրական ակնարկի հետ լրացնում և ամբողջացնում են Լեռնային Ղարաբաղի՝ որպես ուրույն պատմաազգագրական մարզի, ազգագրական և բանահյուսական հարուստ նյութը և ժամանակագրական շարադրանքով դնում գիտական շրջանառության մեջ։

ԹԱՄԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ